

See discussions, stats, and author profiles for this publication at: <https://www.researchgate.net/publication/347861813>

CONFIDENCE, AS A PREREQUISITE OF PSYCHOLOGICAL SAFETY OF PERSON

Article · April 2020

CITATIONS

0

READS

77

3 authors:



[Diana Sargsyan](#)

Yerevan State University

15 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)



[Varduhi Papoyan](#)

Yerevan State University

19 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)



[Alina Galstyan](#)

Yerevan State University

14 PUBLICATIONS 0 CITATIONS

[SEE PROFILE](#)

Some of the authors of this publication are also working on these related projects:



The research is carried out with the support of the topic with the code "18T-5A056" of the RA SCC [View project](#)



Psychological safety [View project](#)

Վ.Ռ. Պապոյան, Ա.Ս. Գալստյան, Դ.Յ. Սարգսյան

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

Հողվածում քննարկվում է վստահության, որպես հոգեբանական երևույթի, ամբիվալենտությունն անձի հոգեբանական անվտանգության ապահովման գործընթացում: Այս հիմնախնդիրը վերջին տարիներին հոգեբանության գրեթե բոլոր բնագավառներում դարձել է հրատապ ուսումնասիրության առարկա, քանի որ վստահության և անվտանգության ապահովումից է կախված ժամանակակից մարդու կենսագործունեության արդյունավետությունը: Հետազոտությամբ ներակայացված են երիտասարդների կողմից հոգեբանական անվտանգության գնահատման առանձնահատկությունները, վստահության դերը աղետների և պատահարների ժամանակ, կենսագործունեության ոլորտներում դրսևորման ձևերը: Քննարկվում է նաև, թե ինչքանով կարող է վստահությունը հանդես գալ որպես հոգեբանական գործոն աղետների և պատահարների ժամանակ, ինչքանով այն կարող է ապահովել անձի կենսագործունեության անվտանգությունը:

Առանցքային բառեր. *վստահություն, անձի հոգեբանական անվտանգություն, աղետների ռիսկի նվազում:*

Բոլորս էլ գիտենք, որ մարդու համար կենսագործունեության ներկա պայմանները հազեցված են թե՛ նյութատեխնիկական, թե՛ տեղեկատվական – սոցիալական, և թե՛ հոգեբանական ազդակներով, որոնք միջնորդավորված և անմիջական ազդեցություն են ունենում կյանքի որակի և անվտանգ գոյության վրա: Այսօր անվտանգ կենսագործունեության ապահովման հիմնախնդիրը դարձել է միջգիտական և բազմաբնագավառային հետազոտման առարկա, որի կիրառական արդյունքները ներդրվում են մարդու կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Այս համակարգվածությունից ելնելով, վերջին տաս տարիների ընթացքում լայնորեն ուսումնասիրություններ են իրականացվում անձի հոգեբանական անվտանգության ոլորտներում՝ համալրելով էրգոնոմիկայի, ինժեներական հոգեբանության, արտակարգ և ճգնաժամային իրադրությունների հոգեբանության, սթրեսաբանության և հոգեկան առողջության բնագավառների հետազոտությունները:

Անձի հոգեբանության տեսանկյունից անվտանգ կենսագործունեությունը, կյանքի որակի բարձրացման և գործունեության արդյունավետության ապահովումը, առողջ ապրելակերպը և այլ նմանատիպ հարցերը քննարկվում են հիմնականում համակարգային մոտեցմամբ՝ դիտարկելով անձին կենսաբանական, սոցիալական և հոգեբանական եռամակարդակում: Մարդու համար օր օրի բարդանում են ակտիվության և գործողությունների ձևերը, որոնք կապահովեն նրա եռամակարդակ անվտանգությունը: Առավելապես, սոցիալական մակարդակում անձն իր գործունեության ընթացքում քիչ դեպքերում է հետամուտ լինում կենսագործունեության անվտանգության կանոնների և օրենքների պահպանմանը: Սովորաբար դրանք իրագործվում են միայն որոշակի մասնագետների կողմից՝ որպես իրենց մասնագիտությանը ներկայացվող պահանջ կամ ճգնաժամային պայմաններում՝ ուղղված որոշակի մասնագիտությունների տեր անձանց (օրինակ՝ բժիշկներ, փրկարարներ, վարորդներ): Մեր դիտարկումները միջավայրում ցույց են տվել, որ նույնիսկ որոշ դեպքերում, օրինակ վարորդները, ավելի քիչ են հետևում

անվտանգության կանոններին: Կարելի է ասել, որ կենսագործունեության անվտանգության օրենքների և կանոնների պահպանում տեղի է ունենում այն դեպքում, երբ իրադրությունը ճգնաժամային է: Իսկ մենք գիտենք, որ արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում սխալներ թույլ տալու հավանականությունը մեծ է:

Անվտանգ կենսագործունեության ձևավորման հիմքում ընկած են հոգեբանական այնպիսի որակների դրսևորումներ, ինչպիսիք են վստահությունը, վտանգի գնահատումը, ռիսկը, որոշման կայացումը, վտանգի գոտում գործողությունների կառավարումը: Նշված հիմնախնդիրներից հոգեբանության մեջ, այն էլ մեր երկրում, բավականին քիչ են ուսումնասիրությունները, հատկապես վստահության երևույթի և անվտանգության ապահովման հոգեբանական մեխանիզմների շուրջ:

Հոգեբանական գրականության մեջ վստահությունը հիմնականում դիտվում է մարդ-մարդ փոխհարաբերություններում՝ որպես փոխներագրման և հաղորդակցման մեխանիզմ: Շատ քիչ են հեղինակները (Ե.Պ. Իլին, Սթիվեն Քոլի 2013), ովքեր վստահությունը դիտում են որպես մեկ այլ անձի հանդեպ ձևավորված հուսադրող վարք՝ ուղղված սեփական անձի անվտանգությանը: Վստահության և անվտանգության ապահովման հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրությունն աղետների հոգեբանության տեսանկյունից դիտարկել են Վ.Ա. Բոդրովը, Վ.Յ. Օռլովը, Մ.Ա. Կոտիկը (1989-2006թթ.), ովքեր փորձարարական հետազոտություններ են իրականացրել մարդ-տեխնիկ անվտանգության հիմնախնդիրների շուրջ, որտեղ վստահությունը դիտվել է որպես գործունեության հուսալիություն [5]:

Վստահությունը հոգեբանական այն կարևոր երևույթներից է, առանց որի մարդը չի կարող կազմակերպել իր կյանքը: Վստահության աստիճանը կախված է նրանից, թե ինչի վրա է հիմնված այդ զգացողությունը՝ հույզերի, նմանության, հուսալիության, թե կանխատեսման: Վստահությունը որպես վարք, հույզ, ինքնակարգավորման մեխանիզմ դիտարկվել են վերջին տաս տարիների ընթացքում հիմնականում արևմտյան հոգեբանների կողմից, որոնց տեսակետներն ամփոփ վերլուծված են համապատասխան հոդվածում, որտեղ շեշտադրվել են ուղևոր – տրանսպորտ անվտանգության հարցերը [4]: Տեսական վերլուծություններից քիչ թե շատ հասկանալի է դառնում, թե ինչ է վստահությունը, երբ այն դրսևորվում է միջանձնային հարաբերություններում, բայց ավելի բարդ է հասկանալ, երբ վստահությունն ուղղված է իրավիճակին կամ աղետի ժամանակ սեփական գործողություններին: Հարկ է նշել, որ վստահությունն ունի տարբեր ներքին ուղղորդումներ՝

1. վստահությունը անհայտին, որի հիմքում ընկած է կանխատեսումը,
2. վստահությունը փաստին, որի հիմքում ընկած է գնահատումը,
3. վստահությունը փաստին, որի հիմքը հուզական է, առաջատար են հույսն ու հավատը [5]:

Վստահության՝ որպես անձի հոգեբանական անվտանգության ապահովման նախադրյալի դերն ամփոփվալենտ է: Անձի կենսագործունեության անվտանգության ապահովման գործընթացում վստահության դերի ուսումնասիրությունը բարդ է, քանի որ վերջինս կարող է և՛ ապահովել, և՛ խաթարել հոգեբանական անվտանգության ձևավորումը: Վստահությունը բարձրացնում է դրական միտվածությունը կամ լավատեսությունը: Դրական միտում ասելով հասկանում ենք ոչ միայն ֆիզիկական և հուզական ներուժի ակտիվացումը, այլ նաև ստեղծագործականության կամ հնարամտության բարձրացումը [6]: Հետազոտությունները ցույց են տվել, որ արտակարգ իրավիճակներում որոշ անձանց մոտ հնարավորինս մոբիլիզացվում են


կոգնիտիվ գործընթացները, և անձը կարողանում է արագ գտնել կամ ստեղծել անվտանգության ապահովման միջոցներ: Նմանատիպ ուսումնասիրություններ են կատարել ճանաչողական հոգեբանության, սպորտի հոգեբանության ոլորտներում, և փաստել են, որ ճգնաժամային պայմանների դեպքում հոգեբանական բարձր պատրաստվածություն անցած մարզիկները կարողանում են արագորեն վտանգի գոտում ելքեր փնտրել, արդյունավետ որոշում կայացնել, կառավարել հուզական վիճակը և դրսևորել ավելի շատ ֆիզիկական ուժ, քան սովորական պայմաններում [2, 6]: Անվտանգությունը կամ վստահության բացակայումը ևս կարող է կարգավորել անձի վարքը հատկապես արտակարգ իրավիճակներում՝ բարձրացնելով զգուշավորությունը և ներքին տագնապայնությունը:

Այսօր նկատում ենք, որ արտակարգ և ճգնաժամային իրադրություններում անձի վարքի արդյունավետությունը նույնպես պայմանավորված է նրա տվյալ պահին դրսևորած հնարամտության աստիճանից: Բհարկե, սա նոր մոտեցում է, և ունի բազմաթիվ բացթողումներ, հատկապես այն հարցերի շուրջ, որոնք վերաբերում են անձի հոգեբանական առանձնահատկություններին [5]: Մարտինա Հեյսը նշում է, որ վստահությունն ազատություն է տալիս մարդուն՝ փոխակերպելով այն հնարամտությամբ և խաբկանքներով [10]: Վերլուծելով նմանատիպ մոտեցումները կարող ենք արձանագրել, որ վստահությունը, հատկապես, երբ այն հիմնված է հուզականության բաղադրիչների վրա, թուլացնում է մարդու ինքնավերահսկողությունը: Վստահության երևույթի ուսումնասիրությունը ամբողջական չի լինի, եթե չդիտարկենք նաև անվտանգություն հասկացությունը [5]: Ուժերի գերագնահատումը, ակտիվությունը, համարձակությունը և լավատեսությունը վստահության ամբիվալենտ բաղադրիչներն են, որոնց դերը և գործառնություններն անձի կենսագործունեության անվտանգության ապահովման գործընթացում կարող են դրսևորվել ամենատարբեր կերպով [5]: Ըստ Լենզլեի մարդն առաջին հերթին պետք է հաղթահարի տագնապը, վախը և անվտանգությունը, որպեսզի հնարավոր դարձնի իր «գոյությունը որոշակի իրավիճակներում» [7]: Աղետի գոտում կարող են հայտնվել բոլորը և միշտ չէ, որ անձը կարող է ցուցաբերել նախաձեռնողականություն կամ հնարամտություն: Ուստի առավել արդյունավետ է գիտելիքների, կարողությունների և հմտությունների դրսևորումները, համապատասխան իրադրության գնահատումը և գործողությունների պլանավորումը ձևավորել որպես արտակարգ իրավիճակներին պատրաստվածություն, իսկ առօրյա կյանքում՝ անվտանգ ապրելու մշակույթ: Անձն իր կյանքի անվտանգությունը պետք է ապահովի ոչ միայն արտակարգ իրավիճակներում, այլ ամեն օր, իր ակտիվության ընթացքում՝ հետամուտ լինելով համակեցության և հասարակական կյանքի օրենքներին:

Դժբախտ պատահարների առաջացման հիմնական պայմաններից մեկն այն է, որ մարդը չի վերահսկում իրադրությունը կամ գործընթացը, երբ հայտնվում է վտանգի գոտում: Երկրորդ պայմանն այն է, որ մարդն այդ վտանգի գոտում չի պահպանում անվտանգության անհրաժեշտ կանոնները: Սա իհարկե տեղի է ունենում երկու ճանապարհով: Առաջին դեպքում մարդը մինչև վտանգի գոտում հայտնվելն արդեն հուզական անհավասարակշռվածության և սթրեսային իրավիճակում է, մյուս դեպքում, ուղղակի ցուցաբերում է ինքնանպատակ կամ ապատեղեկացված վարք՝ ռիսկի դնելով իր հնարավորություններն ու գիտելիքները: Ա.Ե. Տարասը և Կ.Ո. Մելչուկն իրենց «Արտակարգ իրավիճակների հոգեբանություն» գրքում անդրադառնում են բազմաթիվ հեղինակների կողմից կատարված ուսումնասիրություններին, որոնց ընդհանրական վերլուծությունները մատնանշում են արտակարգ և ճգնաժամային իրադրություններում վտան-

գի կանխատեսման կարևորությունը: Իրենց աշխատությունում խոսում են վտանգին պատրաստ լինելու մասին և մեջբերում Վ.Ի. Սևաստյանովի կարծիքը, ըստ որի վտանգի զգացողությունը մարդը չպետք է կորցնի, քանի որ այն ակտիվացնում է հոգեբանական, հուզական մեխանիզմները, որոնք ուղղված են վթարների ժամանակ գործողությունների վերահսկմանը [9]: Վստահության տեսանկյունից, անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը դիտարկվում է որպես մարդկային գործոն. մարդը որպես հասարակության անդամ, որպես տեղեկատվության կրող, որպես անձ՝ կյանքի և առողջության հանդեպ ձևավորված վերաբերմունքով և ինքնագիտակցումով: Վստահությունն անմիջականորեն կապված է հոգեբանական անվտանգության զգացողության հետ: Գործնականում անվտանգությունը հանգում է մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ որոշակի պայմանների ապահովմանը, գոյության և զարգացման պահանջմունքների բավարարմանը:

Դիտարկելու համար, թե մեր միջավայրում երիտասարդները որքանով են գնահատում իրենց կենսագործունեության ոլորտները հոգեբանորեն անվտանգ և ապահով, ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիայի աշխատակիցները կատարել են շարունակական հետազոտություններ համապատասխան մշակված մեթոդաբանությամբ: Հետազոտությունն իրականացրել ենք երիտասարդների շրջանում և կիրառել «Անձի հոգեբանական անվտանգության գնահատման հարցարանը», Ռոտերի՝ «Լոկուս հսկման թեստը»:




Նկ. 1. Անձի հոգեբանական անվտանգության հարցարանի բաղադրիչների գնահատման միջին արդյունքները (n=30)

Անձի հոգեբանական անվտանգության հարցարանն ունի երկու բաժին՝ անձի անվտանգության ոլորտների դասակարգում ըստ կարևորության և այդ ոլորտների բաղադրիչների բալային գնահատում: Սույն հոդվածում ներկայացնում ենք միայն փորձարարական այն խմբի ցուցանիշները, որոնց մոտ անհամապատասխան են եղել անվտանգության ոլորտների և բաղադրիչների տվյալները: Մնացած արդյունքները դեռևս մշակվում են, իսկ անվտանգության ցուցանիշների համապատասխանությամբ արդյունքներով փորձարարական խմբի տվյալները հրատարակված են Վ. Պապոյանի և Ա. Գալստյանի հոդվածում [3]: Լաբորատորիայի տարիների հետազոտություններն ամփոփված են նաև բազմաթիվ այլ գիտական աշխատանքներում և մենագրություններում [1, 8, 4]:

Անձի հոգեբանական անվտանգության բաղադրիչների գնահատման ցուցանիշները փաստում են (նկ. 1), որ փորձարարական խմբում բարձր են գնահատվել առողջության, տեղեկ-

ատվության, մարդու իրավունքների, հասարակական ակտիվության և մշակութային ոլորտները: Այս բաղադրիչների բարձր գնահատումը վերլուծելով ստացվում է, որ փորձարարական խումբը կարևորել է բժշկի այցելությունները, հիվանդությունների կանխարգելումը, առողջ ապրելակերպը, սպորտային ակտիվությունը, հասարակական ամուր կապերը, մարդու իրավունքները, համակեցության նորմերի պահպանումը, քաղաքացիական կյանքի իրավական կարգավորումները և այլն: Չարմանալին նրանում է, որ նույն հետազոտվող խմբում, երբ արդեն հարցում է կատարվել ոչ թե հոգեբանական անվտանգության ընդհանուր բաղադրիչների, այլ սեփական անձի անվտանգության ոլորտների կարևորության, այսինքն կենսագործունեության որ ոլորտներում են հիմնականում երիտասարդներն իրենց ապահով գգում, պատկերը լրիվ այլ է:

Նույն հետազոտվող խումբը, ով բարձր էր գնահատել հոգեբանական անվտանգության ապահովման համար վերը նշված բաղադրիչները, սեփական կյանքի անվտանգությունը չի տեսնում համապատասխան ոլորտներում: Անհատական կենսագործունեության համար հետազոտվողներն ամենաշատը կարևորել են ընտանիքը, առողջությունը, իսկ էկոլոգիան և մշակույթը հայտնվել են վերջին տեղերում՝ ամենաքիչ կարևորված (նկ. 2):



Նկ. 2. Անձի հոգեբանական անվտանգության ոլորտների գնահատումն ըստ կարևորության (n=30)

Արդյունքների վերլուծություններից կարող ենք հանգել հետևյալ եզրահանգումների.

1. Երիտասարդների շրջանում անձի հոգեբանական անվտանգությունը ցածր են գնահատում հիմնականում նրանք, ում մոտ ցածր են նաև անձի տերմինալ և էկզիստենցիալ արժեքները [3]:
2. Անձի հոգեբանական անվտանգությունը ցածր գնահատած երիտասարդների մոտ չափազանց կարևորվում են կենսաբանական պահանջմունքների բավարարվածությունը և կենսական ապահովությունը՝ կեցության պայմանները, առողջությունը, ընտանիքում կայունությունը [1]:
3. Ընդհանուր կենսագործունեության անվտանգության ապահովման համար երիտասարդները վստահում են իրենցից դուրս գտնվող մակրո համակարգերի գործունեությանը՝ հասարակությանը, բնապահպանությանը, տեղեկատվությանը, իրավական դաշտին, առողջապահության և մշակույթի ոլորտների համակարգվածությանը:

4. Սեփական կենսագործունեության անվտանգության ապահովման համար վստահում են միկրո համակարգերին՝ ընտանիքին, մտերիմներին և ընկերներին: Տեղեկատվության և առողջության ոլորտները կարևորվում են երկու դեպքերում էլ:

Այժմ համադրելով վստահության և անվտանգության, անձի հոգեբանական անվտանգության ապահովման մեխանիզմների առանձնահատկությունները, քննարկենք դրանք, երբ խոսքը վերաբերում է, ոչ թե միկրո և մակրո համակարգերի հետ փոխհարաբերակցության, այլ սեփական վարքին և գործողություններին՝ արտակարգ պայմաններում: Փորձարարական խմբում 60%-ի մոտ արտահայտված է *ինտեռնալությունը*, 40%-ի մոտ՝ *էքստեռնալությունը*: Էքստեռնալության դեպքում անձի լոկուս հսկումն ուղղված է արտաքին պայմաններին, անձը գնահատում է իրադրությունը, հաջողության հասնելու պայմանները, պատասխանատվությունն ուղղված է իրավիճակին, կամ դիմացինին: Այս պարագայում կարող ենք ասել, որ *էքստեռնալ* անձիք իրենց հոգեբանական անվտանգության ապահովումն ավելի շատ տեսնում են արտաքին իրավիճակների գնահատման մեջ՝ վստահությունն ուղղված է դիմացինին կամ իրավիճակին: Իսկ *ինտեռնալության* դեպքում անձն ավելի շատ վստահում է իրեն, իր գիտելիքներին և գործողություններին: Այս պարագայում անձի հոգեբանական անվտանգության ապահովման համար անձը վստահում է իր սեփական ուժերին: Կենսագործունեության տարբեր պայմաններում այս երկու լոկուս հսկումները կարող են ունենալ տարբեր դերակատարումներ: Աղետների և վտանգավոր իրադրությունների ժամանակ դժվար է պատկերացնել, թե այս երկու վարքային դրսևորումներից, որն է արդյունավետ: Ըստ Մ. Հենսի և Ս. Ռոֆմանի կատարած հետազոտությունների փոխկապակցվածություն կա անձի վստահության հակվածության, գործողությունների հուսալիության և երկարժեքության միջև [10]:

Ստացվում է, որ հոգեբանորեն բավականին բարդ է բացատրել աղտների ժամանակ անձի վստահության դրսևորման արդյունավետությունը անվտանգության ապահովման տեսանկյունից: Կամա, թե ակամա աղետների ժամանակ ամենաբարդ հոգեկան գործընթացը վտանգի գնահատումն ու կառավարումն է: Վստահությունն այս պարագայում անկախ իր ներքին, թե արտաքին ուղղվածության, կարող է հանգեցնել վտանգի ոչ ճիշտ գնահատմանը: Անձի վստահության դրսևորումն ուղիղ կապված է նրա ինքնագնահատման կայունությունից: Եթե հիմնվենք փորձարարական մեր խմբի արդյունքներին, երբ հոգեբանական անվտանգությունը գնահատվել է ցածր, սեփական կյանքի անվտանգության համար բարձր գնահատվել են կենսական պայմանները, ապա պետք է, որ երիտասարդները զերծ լինեին իրենց սեփական կյանքն ու գործունեությունը վնասող երևույթներից, վստահեն սեփական ուժերին և գիտելիքներին, ապրեն առանց աղետների և պատահարների: Բայց, 2019թ. ՄԱԿ-ի գրասենյակի և ՀՀ ոստիկանության կատարած վերլուծությունները ցույց են տվել, որ **2007 – 2016թթ. հանրապետությունում գրանցվել է միայն 25 624 ճանապարհատրանսպորտային պատահար, որի հետևանքով զոհվել է 3267 քաղաքացի (գրեթե այնքան, որքան COVID19-ից Նիդերլանդներում՝ 4054, 23.04.2020 թվականի դրությամբ), իսկ վիրավորների թիվը 36023 է, տարիքային միջինը 21-25 տարեկան [11]:**

Անձի հոգեբանական անվտանգության ապահովման և կենսագործունեության մեջ արդյունավետ վստահության ձևավորման համար կարևոր է համակշռվածությունն անձի անվտանգության բաղադրիչների և ոլորտների, էքստեռնալության և ինտեռնալության, վստահության ներքին և արտաքին ուղղվածության: Այս կերպ մենք գործ կունենանք ողջամիտ վստահության

հետ՝ հիմնված արտաքին և ներքին վտանգների գնահատմանը, կառավարմանը և կանխարգելմանը:

Խելացի և մտածված վստահությունն աղետների ժամանակ և արտակարգ իրադրություններում անվտանգության երաշխիք է: Այն մեզ հնարավորություն է տալիս վստահություն ցուցաբերել՝ նվազագույնի հասցնելով ռիսկը և առավելագույնս գնահատել հնարավորությունները [6]: Ողջամտությունը կամ ողջամիտ վստահությունն իր մեջ ներառում է երեք հիմնական բաղադրիչներ՝ իրադրությունը (ինչի՞ն կամ ու՞մ ենք պատրաստվում վստահել), ռիսկի գնահատումը – վտանգի չափումը և հուսալիության կամ անվտանգության գնահատում՝ հենման կետերի դուրս բերումը:

Այս երեք բաղադրիչների վերլուծությունների արագությունը կախված է նաև վստահության ձևավորման և գործողությունների կատարման արագությունից: Մտացվում է, վստահության արագ ձևավորվումը փոխկապակցված է իրադրության արագ և որակով գնահատումից, որի արդյունքում արագորեն ձևավորվում է մարդու ստեղծարարական հնարամտությունը՝ իրադրությունից անվտանգ դուրս գալու, աղետի գոտում կյանքի պահպանման համար:

Գրականություն

1. **Աղուզումցյան Ռ.Վ.**, Պապոյան Վ.Ռ., Գալստյան Ա.Ս., և ուրիշ.: Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն //կոլեկտիվ մենագրություն, հեղ.՝ // Եր., ԵՊՀ, 2015 - 142 էջ:
2. **Մկրտումյան Մ.Պ.**, Արտակարգ պայմաններում մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները, Եր.: ԵՊՀ., 1999 - 180 էջ:
3. **Պապոյան Վ., Գալստյան Ա.** Ուսանողի արժեհամակարգի հետազոտումը հոգեբանության անվտանգության համատեքստում, ՀՀ ՊԿԱ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» 2-րդ միջ. գիտ. նյութեր, Եր.: ՀՀ ՊԿԱ, 2019, 427-436 էջ:
4. **Մարգարյան Դ.** Ուղևորի տեղեկացվածությունը որպես հոգեբանական անվտանգության ապահովման նախապայման: Հանրային կառավարում գիտական հանդես, Եր.: ՀՀ ՊԿԱ, 3-4, 2017, 101-106 էջ:
5. **Ильин Е.П.** Психология доверия, СПб.: Питер, 2013. - 288 с.
6. **Кови С., Линк Г.** Разумное доверие / пер. с англ. П. А. Самсонов. - Минск: Попурри, 2013. – 256 с.
7. **Лэнгле А.** Экзистенциально-аналитическая теория личности: Сборник статей: Пер. с нем. /Вступ.ст. С.В. Кривцовой. – М.: Генезис, 2008. – 159 с.
8. **Психологическая безопасность личности в системе человек-транспорт**, //Р. Агузумцян, В. Папоян, А. Галстян, Е. Мурадян, Д. Саргсян, Ер., Изд-во ЕГУ, 2017. - 84 с.
9. **Психология экстремальных ситуаций:** Хрестоматия/ Сост. А. Е. Тарас, К. В. Сельченко. – Мн.: Харвест, 1999. - 480 с.
10. **Heyns M., Rothmann S.** (2015). Dimensionality of trust: An analysis of the relations between propensity, trustworthiness and trust. *SA Journal of Industrial Psychology/SA Tydskrif vir Bedryfsielkunde*, 41(1), Art. #1263, 12 pages. [http:// dx.doi.org/10.4102/sajip.v41i1.1263](http://dx.doi.org/10.4102/sajip.v41i1.1263)
11. <https://armtimes.com/hy/article/122281>.

В.Р. Папоян, А.С. Галстян, Д.Ю. Саргсян

ДОВЕРИЕ, КАК ПРЕДПОСЫЛКА ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ЛИЧНОСТИ

В статье обсуждается проблема доверия и его амбивалентность в процессе обеспечения психологической безопасности личности. За последние годы данная проблема стала предметом неотложных исследований, практически во всех областях психологии, поскольку эффективность современной человеческой жизни зависит от обеспечения доверия и безопасности. Экспериментально представлены особенности оценки психологической безопасности личности со стороны молодежи, роль доверия во время экстремальных ситуаций и происшествий, формы проявления в разных областях жизнедеятельности. Также обсуждается, в какой степени доверие может выступать в качестве психологического фактора во время стихийных бедствий и несчастных случаев, и в какой степени оно может обеспечивать безопасность жизни.

Ключевые слова: доверие, психологическая безопасность, снижение риска бедствий.

V.R. Papoyan, A.S. Galstyan, D.Y. Sargsyan

CONFIDENCE, AS A PREREQUISITE OF PSYCHOLOGICAL SAFETY OF PERSON

The problem of the confidence and its ambivalence in the process of insuring of psychological safety of person is discussed in the article. In recent years, this issue has become the subject of urgent research in almost all areas of psychology, since the effectiveness of modern human life depends on ensuring confidence and security. The study presents the peculiarities of psychological security assessment by young people, the role of confidence in disasters and accidents, and ways of performing activities in the spheres of life. It also discusses the extent to which confidence can act as a psychological factor in disasters and accidents, and how much it can ensure a person's safety.

Keywords: confidence, psychological safety, disaster risk reduction.

Պապոյան Վարդուիհի Ռոբերտի – հոգ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր (ԵՊՀ).

Գալստյան Ալինա Սոխակի – գիտաշխատող (ԵՊՀ).

Սարգսյան Դիանա Յուրիկի – հոգ. գիտ. թեկնածու (ԵՊՀ).

Ներկայացման ամսաթիվը՝ 24.04.2020

Գրախոսման ամսաթիվը՝ 24.04.2020